ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 19.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/36

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Էլիտ Արման Շին» ՍՊԸ-ի կողմից 05.03.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/36 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Էլիտ Արման Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Էլիտ Արման Շին» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած 05.03.2018թ. բողոքով հայտնել է, որ Գյումրի քաղաքի փողոցների երթևեկելի մասի ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՇՄԳՔՀԿՀ-ԲՄԱՇՁԲ-01/18» ծածկագրով բաց մրցույթին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «ՇԻՆՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ն:

«ՇԻՆՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի մասնակցության հայտի հավելված 9-ով ներկայացվել է հայտի ապահովում՝ տուժանքի մասին համաձայնության ձևով, այն դեպքում, երբ «ՀՀՇՄԳՔՀԿՀ-ԲՄԱՇՁԲ-01/18» ծածկագրով բաց մրցույթի հրավերի 7.1 կետով սահմանվել է, որ հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխքի կամ կանխիկ փողի ձևով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.02.2018թ. ժամը 11:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետով հանձնաժողովը որոշել է «ՇԻՆՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ին ճանաչել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած և առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընկերությունը որպես բողոքի իրավական հիմք վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասը, 32-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությունը, 40-րդ կետի 4-րդ ենթակետը:

«ՀՀՇՄԳՔՀԿՀ-ԲՄԱՇՁԲ-01/18» ծածկագրով բաց մրցույթի հրավերի 7.1 կետի համաձայն՝ հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Ընկերությունը գտնում է, որ «ՇԻՆՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ի կողմից հայտի ապահովումը պետք է ներկայացվեր բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, այլ ոչ թե տուժանքի մասին համաձայնության ձևով, ինչը հակասում է հրավերի 7.1 կետով սահմանված պահանջին:

«Էլիտ Արման Շին» ՍՊԸ-ն գտնում է, որ «ՇԻՆՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելով և վերջինիս առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելով՝ հանձնաժողովը խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով և հրավերի 7.1 կետով նախատեսված պահանջները:

Ընկերությունը գտնում է, որ «ՇԻՆՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովումը, հետևաբար նաև վերջինիս հայտը հանձնաժողովի կողմից պետք է գնահատվեր Ընթացակարգի հրավերի պահանջներին անհամապատասխան և մերժվեր:

«Էլիտ Արման Շին» ՍՊԸ-ն բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է դադարեցնել «ՀՀՇՄԳՔՀԿՀ-ԲՄԱՇՁԲ-01/18» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 26.02.2018թ. ժամը 11:30-ին նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետով կայացրած՝ «ՇԻՆՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշումը:

«Էլիտ Արման Շին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 07.03.2018թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցություն, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանը Խորհրդին ուղղված 06.03.2018թ. թիվ 01/02.4/2251-18 գրությամբ հայտնել է, որ armeps էլեկտրոնային համակարգում պատվիրատուն հայտով պահանջել է ներկայացնել տուժանքի մասին համաձայնագիր հավելված 9-ը (armeps էլեկտրոնային համակարգում տեղադրված պահանջը կցվում է):

Ըստ էության բողոքը վերաբերվում է հրավերի պահանջին: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, մեջբերում՝ «Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը», ուստի այս հիմքով Պատվիրատուն խնդրել է «Էլիտ Արման Շին» ՍՊԸ-ի 05.03.2018թ. ներկայացրած բողոքը չքննարկել:

Միաժամանակ Պատվիրատուն նշել է, որ ընտրված մասնակցի ներկայացրած գնային առաջարկը պակաս է գնումների բազային միավորի յոթանասունապատիկից, ինչպես նաև 9 580 000 /ինը միլիոն հինգ հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամով պակաս է երկրորդ տեղը զբաղեցրած և բողոքարկող մասնակցի գնային առաջարկից:

Գյումրու համայնքապետարանը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 07.03.2018թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/36 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/36 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի կողմից Գյումրու համայնքապետարանի կարիքների համար Գյումրի քաղաքի փողոցների երթևեկելի մասի ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀՇՄԳՔՀԿՀ-ԲՄԱՇՁԲ-01/18» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «ՇԻՆՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ն:

2. Հրավերի 7-րդ կետի 7.1 ենթակետով սահմանվել է, որ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

3. «ՇԻՆՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ն «ՀՀՇՄԳՔՀԿՀ-ԲՄԱՇՁԲ-01/18» ծածկագրով բաց մրցույթի մասնակցության հայտի թիվ 9 հավելվածով ներկայացրել է հայտի ապահովում՝ միակողմանի հաստատած տուժանքի մասին համաձայնագրի ձևով:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.02.2018թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ՇԻՆՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.03.2018թ. ժամը 15:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով կայացված որոշմամբ «ՇԻՆՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «ՇԻՆՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ի 05.03.2018թ. բողոքը, ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի 06.03.2018թ. թիվ 01/02.4/2251-18 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: ***Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:*** Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:

Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ, եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: ***Այլ դեպքերում հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:***

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի կողմից Գյումրու համայնքապետարանի կարիքների համար Գյումրի քաղաքի փողոցների երթևեկելի մասի ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀՇՄԳՔՀԿՀ-ԲՄԱՇՁԲ-01/18» ծածկագրով բաց մրցույթ:

Նշված մրցույթի հրավերի 7-րդ կետի 7.1 ենթակետով սահմանվել է, որ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

<u>Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:</u>

Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «ՇԻՆՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ն հայտով ***հայտի ապահովումը ներկայացրել է գրությունքի ձևով, այն է՝ միակողմանի հաստատած գրությունքի մասին համաձայնագրի և դրան կից հայտի ապահովման վճարման պահանջագրի ձևով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.02.2018թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ՇԻՆՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, իսկ այնուհետև՝ 02.03.2018թ. թիվ 3 որոշմամբ՝ նաև ընտրված մասնակից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ***հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ գրությունքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:***

աշխատանքի կամ ծառայության ***նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:***

Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.1 ենթակետով սահմանվել է, որ ***<u>հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով,</u>*** մինչդեռ Խորհուրդն արձանագրում է, որ «ՇԻՆՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ի կողմից հայտի ապահովումը ներկայացվել է տուժանքի ձևով, այն դեպքում, երբ Ընթացակարգի շրջանակներում գնվելիք աշխատանքի նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, որի հիման վրա հրավերով պահանջվել է հայտի ապահովումը ներկայացնել բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Նման պայմաններում Խորհուրդը գտնում է, որ «ՇԻՆՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում «ՀՀՇՄԳՔՀԿՀ-ԲՄԱՇՁԲ-01/18» ծածկագրով բաց մրցույթի պահանջներին:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՇԻՆՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի պահանջներին, և Կարգի 41-րդ կետի համաձայն այն ենթակա չէ շտկման, ուստի Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 40-րդ կետի 4-րդ կետի, ինչպես նաև Հրավերի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում վերջինիս հայտը ենթակա էր մերժման:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի այն պնդմանը, որ «Էլիտ Արման Շին» ՍՊԸ-ի բողոքն ըստ էության վերաբերում է հրավերի պահանջին և համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, այն պետք է ներկայացվեր

մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը, ապա Խորհուրդն արձանագրում է, որ «Էլիտ Արման Շին» ՍՊԸ-ն չի բողոքարկել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, այլ բողոքարկել է «ՇԻՆՊԼՈՒՍ» ՍՊԸ-ի հայտի՝ «ՀՀՇՄԳՔՀԿՀ-ԲՄԱՇՁԲ-01/18» ծածկագրով բաց մրցույթի հրավերի պահանջներին համապատասխան լինելը, ուստի նման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ բողոքը մինչև հայտերի բացման վերջնաժամկետը ներկայացված լինելու պահանջի մասին դրույթը չի գործում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

«Էլիտ Արման Շին» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 05.03.2018թ. ներկայացված բողոքը բավարարել՝

պարտավորցնել Գյումրու համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված «ՀՀՇՄԳՔՀԿՀ-ԲՄԱՇՁԲ-01/18» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու գնահատող հանձնաժողովի կողմից 26.02.2018թ. ժամը 11:30-ին նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետով կայացված՝ «ՇԻՆՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**